«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ էկոլոգիական կրթության կարևորությունը դպրոցում

Հետազոտող ուսուցիչ՝ Նելլի Բարեյան

անուն, ազգանուն

Քարակերիտի թիվ 1 միջնակարգ դպրոց

դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Կարինե Գևորգյան

անուն, ազգանուն

ԱՐՄԱՎԻՐ- 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------3-4 էջ
2. Գրական ակնարկ ---------- 5-8 էջ
3. Գործնական համատեքստ ---------- 9-14 էջ
4. Եզրակացություն---------- 15-16 էջ
5. Գրականության ցնակ---------- 17 էջ

Ներածություն

Այս աշխատիը մենք չեն արաարել,
սակայն այդ աշխարհում ապրողները մենք ենք:
Ժողովրդական իմաստություն

Հազարամյակներ շարունակ մենք պայքարել ենք բնության դեմ, իշխել նրան, վերափոխել, դաժանաբար ոչնչացրել: Ինքը՝ բնությունը, եղել և միշտ կլինի մարդուց ուժեղ, քանի որ նա է ծնել մարդուն: Մարդը միայն մի ակնթարթ է բնության կյանքի մեջ, իսկ բնությունն ընդմիշտ է և անվերջ :

Մարդու կողմից բնության անսահման շահագործման դարը թողնենք ետևում: Բնությունը վերարտադրություն է պահանջում: Մոլորակի հետ փոխհարաբերություն հաստատելու համար անհրաժեշտ են խորը գիտելիքներ և խելամիտ զգուշություն: Դրանք են մարդկության փրկության միակ հուսո կանթեղները: Պահպանել ներդաշնակություն մարդու և բնության միջև. սա է հիմնական խնդիրը, որը ծառացել է ներկա սերնդի առջև: Անհրաժեշտ է զարգացնել յուրաքանչյուր մարդու մոտ «էկոլոգիկան գիտակցություն», որն էլ կորոշի տեխնոլոգիաների, ձեռնարկությունների կառուցման և բնական ռեսուրսների օգտագործման տարբերակների ընտրությունը:

Սույն աշխատանքի նպատակն է ցույց տալ էկոլոգիական նոր մտածողության հաստատման կարևորուտյունը ողջ աշխարհում և, հատկապես, Հայաստանում, քանի որ ով ցանկանում է աշխարհը ավելի լավ դարձնել, պետք է սկսի հենց իրենից: «Բնությունից վերցնել ամեն ինչ» կարգախոսից անհրաժեշտ է անցնել «Բնությունը մեր տունն է» կարգախոսին:

Սույն աշխատանքի առաջին մասում կներկայացվի էկոլոգիական կրթության ՝ որպես գլոբալ ճգնաժամից դուրս գալու միջոցի, էությունը, անհրաժեշտությունը, նպատակները և դրանց հասնելու խնդիրները:

Երկրորդ մասում կքննարկվի Հայաստանի Հանրապետության էկոլոգիկան կրթության ոլորտում առկա խնդիրները, դրանց լուծման ուղիները և ժամանակակից էկոլոգիկան կրթության քաղաքականության մշակման անհրաժեշտությունը: Հայաստանի Հանրապետությունը ունի անհրաժեշտ ներուժ՝ ստեղծելու նոր, էկոլոգիական կրթության պահանջները բավարարող կրթական համակարգ: Դրա համար անհրաժեշտ է ճիշտ ռազմավարության մշակում և գործողությունների համակարգված իրականացում: Հայաստանի Հանրապետությունում ծավալված տնտեսական բարեփոխումները և միջազգային բնապահպանական համագործակցության շրջանակների ընդլայնումը նպաստեցին նոր էկոլոգիական

քաղաքականության ձևավորմանը, որը ներկա և ապագա սերունդների համար կսեղծի կայուն երաշխիքներ էկոլոգիապես անվտանգ շրջակա միջավայրում առողջ և բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Նման նպատակի իրագործումը բարդ և կարևոր խնդիր է և անհնար է առանց բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման զարգացման: Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական միասնական ազգային համակարգի ստեղծման անհրաժեշտությունը և հրատապությունը պայմանավորված է նաև երկրում ստեղծված անբարենպաստ էկոլոգիական իրավիճակով, որի պայմաններում դիտվում է զգալի տարբերություն տնտեսական աճի և շրջակա միջավայրի որակի, հասարակական էկոլոգիական գիտակցության ու բնապահպանական վարվելաձևի միջև: Սույն հայեցակարգի շրջանակներում բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական միասնական ազգային համակարգը դիտվում է որպես անընդհատ գործընթաց, որն ընդգրկում է հասարակության լայն խավերը: Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ազգային համակարգի տակ պետք է հասկանալ կրթական տարբեր մակարդակներում իրականացվող գործողությունների ամբողջություն, որը հասարակության էկոլոգիական գիտակցության, գիտելիքների և պատասխանատվության բարձրացման միջոցով բնակչության համար ստեղծում է էկոլոգիապես անվտանգ և առողջ շրջակա միջավայր: Նշված ազգային համակարգի հաջողության երաշխիքն է՝ բնապահպանական կրթության և դաստիարակության խնդիրներով զբաղված բոլոր գերատեսչությունների ու հասարակության լայն շրջանակների միասնական համակարգված աշխատանքը:

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Գրական ակնարկ

Էկոլոգիական կրթության նպատակը անձի՝ հասարակության և բնության օրենքներին համաձայն էկոլոգիական մշակույթի և էկոբարոյական վարքագծի ձևավորումն է: Էկոլոգիական դաստիարակության հիմքում ընկած են էկոլոգիական, հասկացությունների, գիտելիքների, արժեքների, պրակտիկ փորձի յուրացումը: Էկոլոգիական դաստիարակության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամաբ, որի կառուցվածքի հիմքը բնապահպանական գիտակցության զարգացումն է: Սա ենթադրում է, որ բարոյական և բնապահպանական սկզբունքները բնության կառավարման և խթանման գաղափարների օպտիմալացման, ակտիվ ուսումնասիրության արդյունքն է: Ճիշտ օգտագործելով տարբեր ուսուցման մեթոդներ՝ դաստիարակում ենք էկոլոգիապես գրագետ և ազնվաբարո մարդ: Նպատակաուղղված կրթական գործընթացում են սովորողների կողմից յուրացվում բնագիտական առարկաների հիմունքները, ձևավորվում են բնության հետ ճիշտ շփվելու կարողությունները, ձևավորվում են արժեքային կողմնորոշումները, բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքը: Էկոլոգիական կրթությունն ունի փուլային բնույթ՝

1. Էկոլոգիական պատկերացումների, հասկացությունների ձևավորում

2. Մարդակենտրոն էկոլոգիական գիտակցությունից էկոկենտրոնի անցում

3. Էկոլոգիական գործունեության իրականացում

4. Բնության մեջ և շրջապատում անվտանգ վարքագծի դրսևորում

Բնապահպանական հայեցակարգի ձևավորումը դպրոցներում,սովորողների մոտ «Մարդը և աշխարհը» գաղափարախոսության մեջ տալիս է ուժեղացված էկոլոգիական հասկացություններ, հստակեցնում է զգալի թվով վառ ու մատչելի օրինակներով: Սկսած «Ես և շրջակա աշխարհը» առարկայի առաջին դասից՝ կապ է ստեղծվում հասարակության և բնության միջև, որը դառնում է անբաժանելի օրգանական ամբողջություն, իսկ ինքը՝ սովորողը, այդ ամբողջության մի մասնիկը: Սա հնարավորություն է տալիս վաղ հասակից ստեղծել մանկական ամբողջական բարոյական և էկոլոգիական գաղափարներով անհատ, որը պատկերացնում է մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի հանդեպ՝ թե' դրական և թե' բացասական իմաստով: Էկոլոգիական դաստիարակության բովանդակությունը հիմնված է մի շարք ոլորտների գիտելիքների ինտեգրման վրա՝ փիլիսոփայական, սոցիալական,

հոգեբանական, մանկավարժական, բնագիտական և այլն: Էկոլոգիական դաստիարակության բովանդակային կարևոր բաղադրիչներ են մարդու և բնության փոխհարաբերությունների, կենսաբանական համակարգերի էվոլուցիայի, մարդու առողջության պահպանման վերաբերյալ տեսությունները, հայեցակարգերը, ինչը բնութագրում է մարդուն և բնությանը՝ որպես արժեքի: Էկոլոգիական դաստիարակության արժեքային բաղադրիչ է շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի գնահատումը: Էկոլոգիական դաստիարակության արդյունավետ իրականացման մեթոդներ են զրույցը, դասախոսությունը, բանավեճը, պատմելը, ուսումնահետազոտական նախագծերը և այլն: Նպատակահարմար են նաև ցուցադրական մեթոդները, ինչպես նաև վեբ տեխնոլոգիաների նպատակաշին կիրառումը: Էկոլոգիական դաստիարակության գործընթացում արդյունավետ են համագործակցային, կոլեկտիվ, խմբային աշխատանքի ձևերը: Էկոլոգիական դաստիարակության արդյունավետ մեթոդ է հատկապես բանավեճը, որի թեման ընտրվում է՝ հաշվի առնելով սովորողների էկոլոգիական գիտելիքների յուրացվածության մակարդակը, ակտիվությունը, դրդապատճառների ձևավորվածությունը: Բանավեճն առավելապես նպատակաուղղված է սովորողների ինքնուրույնության, ճանաչողական հետաքրքրությունների և էկոլոգիապես անվտանգ պրակտիկ գործունեության խթանմանը: Ներկայումս կրթական համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը նոր հնարավորություններ է ընձեռում էկոլոգիական դաստիարակության արդյունավետ իրականավման ուղղությամբ, օրինակ՝ էլեկտրոնային տեքստերով աշխատանքը, էկոլոգիական իրավիճակների մոդելավորումը, տեսանյութերի տեղադրումը և այլն:Ներկայումս բնության հետ փոխհարաբերությունների տարերային զարգացումը վտանգ է սպառնում ոչ միայն առանձին օբյեկտների,տարածքների, երկրների, այլև ամբողջ մարդկության գոյությանը: Այն բացատրվում է նրանով, որ մարդկային ցեղի առաջացումը, ինչպես նաև մարդը՝ իր նյութական և հոգևոր պահանջմունքներով, խիստ կապված է բնական աշխարհի հետ, սակայն, ի տարբերություն մնացած օրգանիզմների, այդ կապերը այնպիսի մասշտաբների և ձևի են հասել, որ այն կարող է բերել (կամ արդեն բերում է) գրեթե ամբողջ կենսոլորտի ընդգռկմանը ժամանակակից հասարակության կենսապահովման մեջ՝ հասցնելով մարնկությանը էկոլոգիական աղետի շեմին:

Իրադրությունների տարերային զարգացումը հնարավոր է դադարեցնել միայն գիտելիքներով այն մասին, թե ինչպես կարելի է դրանք կառավարել, և այդ գիտելիքները պետք է ունենան, ծայրահեղ դեպքում, հասարակության հնարավորինս մեծ թվով անդամներ, որն էլ հնարավոր է միայն մարդկության

համընդհանուր էկոլոգիկան կրթության միջոցով: էկոլոգիական լուսավորչությունը համարվում է այն ուղղություններից մեկը, որով աշխարհը կարող է դուրս գալ էկոլոգիկան ճգնաժամից: Այս ուղղության իմաստը կայանում է էկոլոգիկան կրթության, լուսավորչության և դաստարակության զարգացման մեջ այն խնդրի լուծման համար, որը կապված է հասարակական էկոլոգիական գիտակցության վերակառուցման, մարդու ապրելակերպի, նրա բարոյականության փոփոխման հետ:Այլ կերպ ասած, էկոլոգիկան ճգնաժամի հաղթահարման ռազմավարությունը պետք է ունենա ոչ միայն գիտատեխնիկան և իրավական, այլ նաև բարոյական բաղադրիչ:

Հասարակական էկոլոգիկան գիտակցությունը միշտ էլ գոյություն է ունեցել մարդկության պատմական բոլոր փուլերում՝ օբյեկտիվորեն արտահայտելով տվյալ պահին գոյություն ունեցող մարդու և բնության փոխհարաբերության պատկերացումները: Հատկապես էկոլոգիկան գիտակցության ձևավորված այս տեսակները, ինչպես գտնում են գիտնական-հոգեբանները, որոշում են մարդկանց վարքը բնական աշխարհի հետ փոխհարաբերության ժամանակ: Օբյեկտիվ իրականությունը վկայում է, որ ներկայումս մարդու տնտեսական և մշակութային գործունեության համարյա բոլոր ոլորտներում մարդու գիտակցության մեջ ամուր հաստատված է մարդկային բացառիկության՝ էկոլոգիկան օրենքներին չենթարկվելու գաղափարը: Շրջակա բնական միջավայրի նկատմամբ մարդկանց վարքագիծը, որը հիմնված է մարդկային բացառիկության գաղափարի վրա, բազում հետազոտողների կարծիքով, մեր մոլորակի էկոլոգիական ճգնաժամի առաջացման գլխավոր պատճառներից մեկն է:

Մարդու և բնության փոխհարաբերության հայացքների զարգացման մեջ նշանակալի ներդրում են կատարել Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը «Կապիտալ», «Բնության դիալեկտիկա»/1884թ/ և այլ աշխատություններում: Այս առիթով Կ. Մարքսը գրել է. **«Մարկային նախագծերը, որոնք համաձայնեցված չեն բնության օրենքներին, միայն դժբախտություն են բերում»:**

Գոյություն ունեն էկոլոգիկան կրթության էության և նպատակների տարբեր մեկնաբանումներ: Այդպիսիք են, օրինակ՝ «բնապահպանական լուսավորչություն», «կրթություն շրջակա միջավայրի վերաբերյալ», «դպրոցական ուսուցման էկոլոգիա», «էկոլոգիական կրթություն և դաստիարակություն» (կամ առանց «դաստարակություն» բառի): Այսօր առավել կիրառելի է դարձել «էկոլոգիկան կրթություն» բառակապակցությունը: Չնայած այս բոլոր բառակապակցությունները ձևով միմյանցից տարբեր, այունուամենայնիվ միևնույն իմաստն են արտահայտում: էկոլոգիկան կրթության էությունը կարելի է արտահայտել հետևյալ կերպ.

էկոլոգիական կրթությունը անհատի ուսուցման, դաստիարակման և զարգացման չընդհատվող գործընթաց է, որն ուղղված է գիտելիքների և հմտությունների, արժեքային կողմնորոշման, բարոյաէթիկական և գեղագիտական հարաբերությունների համակարգի ձևավորմանը, որոնք ապահովում են անձի էկոլոգիական պատասխանատվությունը բնասոցիալական միջավայրի վիճակի և բարելավման նկատմամբ:

Ներկայումս գոյություն չունի էկոլոգիական կրթության գլխավոր նպատակի միանշանակ և բոլորի կողմից ընդունված սահմանում: Մի դեպքում նպատակը համարվում է որպես «էկոլոգապես գրագետ մարդու նախապատրաստում», մեկ այլ դեպքում՝ «բնասոցիալական միջավայրի նկատմամբ պատասխանատվության դաստիարակում», կամ «էկոլոգիկան գիտակցության ձևավորում», նաև «էկոլոգիական բարոյականություն»: Վերջինս կարելի է ասել, որ իր մեջ է ներառում նախորդ բոլոր ասվածները: Ընդհանրացնելով կարելի է ասել. **էկոլոգիական կրթության նպատակը անհատի և հասարակության էկոլոգիական բարոյականության զարգացումը կամ դաստիարակումն է:**

Էկոլոգիական կրթության ոլորտում տարբեր երկրների ջանքերի կոորդինացումը իրականացվում է ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի հարցերով հանձնաժողովի կողմից : Անհրաժեշտ է բոլոր կրթական ծրագրերի հիմքում դնել գլոբալ էկոլոգիական դաստիարակությունը՝ սկսած նախադպրոցականից մինչև բուհական կադրերի վերապատրաստման համակարգը: Մեր գոյությունը, շրջակա միջավայրի պահպանությունը հնարավոր է մնան աբստրակտ հասկացություններ, եթե մենք չներշնչենք յուրաքանչյուրին հետևյալ պարզ և համոզիչ միտքը. մարդիկ բնության մասնիկն են, մենք պետք է սիրենք մեր ծառերը և գետերը, վարելահողերը և անտառները այնպես, ինչպես սիրում ենք մեր սեփական կյանքը:

Համաշխարհային զարգացման նպատակների փոփոխության հետ մեկտեղ պետք է փոփոխվի նաև հասարակության էկոլոգիական գիտակցությունը: Ժամանակակից էկոլոգիական կրթությունը գաղափարապես ներդաշնակ է հանուն կայուն զարգացման կրթությանը և հաջողությամբ կարող է նպաստել վերջինիս՝ մեծացնելով կայուն զարգացման ժամանակակից ռազմավարությունում իրականացվող քաղքական գործողությունների արդյունավետությունը:

Գործնական համատեքստ

Էկոլոգիական ճգնաժամը առաջանում է, երբ խախտվում է բնության օրենքներով գործող հավասարակշռությունը բնությունից վերցնում ենք ավելին, քան կարելի է, և մարդու գործունեության հետևանքով մեծանում է արտադրական թափոնների ծավալը: Հարց է ծագում՝ ի՞նչը պահպանել և ինչի՞ց պահպանել, որպեսզի տեղի չունենա բնական աղետը: Աղտոտումից պահպանել հողերը, գետերը, աղբյուրները, լճերը, ծովերը, համաշխարհային օվկիանոսը, մթնոլորտը, կենսոլորտը: Այս հրատապ պահանջը պետք է հասցնել յուրաքանչյուր դպրոցականի, ուսանողի և յուրաքանչյուր մարդու գիտակցությանը: Չէ որ մարդու գոյությունը պայմանավորված է բնությամբ: Եթե դպրոցականը խորապես հասկանա, գիտակցի, որ իր հարազատների, մերձավորների, ամբողջ մարդկության կյանքը, բարօրությունը, նրանց այսօրը և վաղվա օրը կախված է բնությունից, նա կամովին կհամալրի բնությունը պահպանողների շարքերը: Շրջակա միջավայրի պահպանությանը իրենց գործուն մասնակցությունը պիտի ունենա ընտանիքը, դպրոցը, ողջ հասարակությունը: Այս գործում մեծ է հատկապես դպրոցի դերը, քանի որ այստեղ է իրագործվում կազմակերպված, պլանավորված դաստիարակությունը: Փաստացի, անառարկելի օրինակներով պիտի հասկացնել սովորողներին, թե ինչու պահպանեն բնությունը: Սովորողների, ընդհանրապես մարդու էկոլոգիական կուլտուրան նրա՝ բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի պատասխանատվութունն է: Այն իրականութուն դարձնելու համար դպրոցից, ընտանիքից ողջ հասարակությունից պահանջվում է սովորողների հետ տանել ամենօրյա նպատակաուղղված աշխատանք: Առաջին հերթին նրանց զինել համապատասխան գիտելիքներով: Այո, հնարավոր է: Այդ աշխատանքը կարող են կատարել կենսաբանութան, աշխարհագրության, քիմիայի, ֆիզիկայի ուսուցիչները: Մի շարք գիտնականներ մշակել են դպրոցականների էկոլոգիական կրթության սկզբունքները և էկոլոգիական կուլտուրան: Այդ սկզբունքների թվին են դասվում ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի արդյունավետորեն օգտագործումը, էկոլոգիական նյութերի, էկոլոգիական հիմնախնդիրների և բնության պահպանության նպատակով միջոցների կիրառումը: Բնության պահապնության համար դպրոցականներն ամենուրեք պաետք է պահպանեն առողջապահական մաքրությունը՝ չաղտոտեն գետերը, աղբյուրները, հողերը, մթնոլորտը, չկտրեն ծառերը, անտառներում կրակ չվառեն և այլն: Ներկայումս խիստ անհրաժեշտություն է դպրոցներում յուրաքանչյուր տարի ղեկավարությանը ներկայացնել գրավոր հաշվետվություն՝ այդ ուղղությամբ

իրենց կատարած աշխատանքի մասին: Էկոլոգիական կրթության և դաստիարակության նպատակն է աճող սերնդին ծանոթացնել բնության, շրջակա միջավայրի առանձնահատկություններին, պարզաբանել բնության կարևորագույն օրենքները և այն ուղիները, որոնց միջոցով կարելի է պահպանել ու վերարտադրել բնությունը: Անհրաժեշտ է մանկական տարիքից նպատակաուղղված ձևով դաստիարակել պատասխանատվություն մեզ շրջապատող միջավայրի նկատմամբ: Իսկ դրա իրականացումը հնարավոր է հիմնականում սովորողների ճանաչողական գործընթացում, մասնավորապես, երբ նրանք ծանոթանում են Հայաստանի բուսական և կենդանական աշխարհի տեսակներին: Դա կատարվում է ուսուցման, ինչպես նաև սովորողների հետ հատուկ աշխատանքի՝ բնապահպանական միջոցառումների, ցուցահանդեսների, էքսկուրսիաների, կազմակերպման միջոցով:Այստեղ անգնահատելի մեծ դեր ունի ուսուցիչը: Նա յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ դասը պետք է հարստացնի համոզիչ փաստերով հաղորդի բնության պահպանության վերաբերյալ: Ուսուցման նման ձևը նպաստում է ծրագրային նյութի յուրացմանը, գիտական գիտելիքների ձեռքբերմանը և ամրապնդմանը, էկոլոգիական կրթության և դաստիարակության իրականացմանը: Բնության նկատմամբ գիտակցական վերաբերմունքի դաստիարակումը աշակերտների մոտ ձևավորում է էկոլոգիական աշխարհայացք, էկոլոգիական մտածողություն և էկոլոգիական կուլտուրա: Ուստի սույն աշխատանքի առաջին մասում նշված էկոլոգիական կրթության անհրաժեշտությունը, նպատակները, խնդիրները վերաբերում են նաև մեր հանրապետությանը: Շրջակա միջավայրը բոլոր մարդկանց հոգածության առարկան պետք է լինի, և նրա բարեհաջող վերականգնման համար բոլորը անձնական պատասխանատվություն են կրում:: Այսինքն՝ էկոլոգիական դաստիարակություն ասելով հասկանում են անձի ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացների ամբողջական միասնությունը, որը նպատակաուղղված էաճող սերնդի էկոլոգիական կուլտուրայի և աշխարհայացքի ձևավորմանը: «Էկոլոգիական գիտակցություն», «էկոլոգիական մտածողություն», «էկոլոգիական կուլտուրա» հասկացությունները նոր են և դեռևս ձևավորման ընթացքի մեջ են, որոնք խնդրառում են նոր բացատրություններ: Էկոլոգիական կուլտուրան, որպես դաստիարակության հետևանք, չպետք է ընկալել որպես զուտ արտաքին ներգործություն: Էկոլոգիական կուլտուրայի տիրապետող մարդը տարբերվում է բնության հետ ներդաշնակության հասնելու ոչ միայն իր արտաքին աշխարհով, այլև իր ներքին աշխարհով: Այսօր, երբ բազմաթիվ գործոնների ազդեցության հետևանքով կորչում են բարոյական շատ արժեքներ, և հասարակությունը կարիք է զգում իսկական արժեքների, պետք է հենվել

բնահարմարության, ճշմարիտ արժեքների գերակայության վրա, որով կարելի է որոշել իսկական էկոլոգիական կուլտուրա ունեցող անձին: Միայն կուլտուրայի միջոցով է հնարավոր մարդկանց գործունեության համապատասխանեցումը կենսոլորտի և կյանքի սոցիալական օրենքներին: էկոլոգիական կուլտուրա ունեցող մարդը առաջին հերթին հասնում է ներդաշնակության ինչպես իր ներաշխարհի, այնպես էլ արտաքին աշխարհի հետ: Ավագ դպրոցական տարիքում այդ ունակությունը ձևավորվում է հիմնական հատուկ գիտելիքների, հուզական ոլորտի և էկոլոգիական գործունեության կարողությունների զարգացման հաշվին:

Ինչպես արդեն նշել ենք, Հայաստանը պատրաստակամություն է հայտնել ինտեգրվելու Եվրոպական կրթական տարածությանը: Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ազգային համակարգի ստեղծման՝ պետական ծրագրերի մշակման, օրենսդրական և մեթոդական նորմերի կատարելագործման,ոլորտի զարգացմանը նպաստող միջոցառումների Մարդուն շրջապատող աշխարհը բազմաձև և բազմադեմ է, դա ոչ միայն բնական և սոցիալական աշխարհն է, այլ արվեստի, տեղեկատվության, տեխնիկայի, բարձր տեխնոլոգիաների, բառերի աշխարհն է: Այդ աշխարհներից յուրաքանչյուրի հետ ավագ դպրոցականը այնպիսի հարաբերություններ պետք է ստեղծի, որոնք նրան հնարավորություն կտան՝ ներդաշնակ ապրելու դրանց հետ:Հաճախ այդ հարաբերությունները տարերային են, և այդ ժամանակ դերահասը դասեր է առնում դասից՝ հաղթահարելով սեփական սխալները: Կարելի է ասել ավագ դպրոցականները մարդկանց, բնության հետ շփվելու դասեր են առնում ծնողներից, ուսուցիչներից, որոնք փոխանցում են իրենց կենսափորձը: Սակայն հաճախ ավագ սերնդի էկոլոգիական արժեքների փորձը միշտ չէ, որ համապատասխանում է նոր ժամանակի պահանջներին: Չե՞ որ շատ սերունդներ դաստիարակվել են բնության նվաճողի, սպառողի ոգով: էկոլոգիական դաստիարակության պրակտիկան ցույց է տալիս, որ ավագ դպրոցականների էկոլոգիական գիտելիքների ձևավորումը իրականացվում է կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության դասերին: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ոչ բոլոր սովորողներն են սիրում նշված առարկաները և էկոլոգիական տեղեկատվություն կրող նյութերի նկատմամբ նրանց ցածր հետաքրքրությունը բացատրվում է ոչ միայն նրանով, որ այն չի համապատասխանում սովորողների հոգեկան պահանջմունքներին, այլ նաև նրանով, որ այդ նյութերը ուսուցիչների կողմից մատուցվում են ձևական, առանց հատուկ շեշտվածության և նպատակաուղղվածության:Այդ իսկ պատճառով մեր դպրոցներում էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը գտնվում են անբավարար վիճակում: Սակայն մի շարք խնդիրներ շատ հետաքրքիր ձևով կարելի

է ներկայացնել օրնակ քիմիայի դասաժամերին: Այստեղ ես ներկայացնում եմ իմ մանկավարժական փորձը՝ կոնկրետ դասի օրինակով:

Դասն անցկացվել է 8-րդ դասարանում՝ «Օդային ավազանի պահպանումը» թեմայի շրջանակներում: Դասը անցկացվել է խմբային եղանակով, դասարանը բաժանվել է 4 խմբի, յուրաքանչյուր խումբ ներկայցրել է օդային ավազանի աղտոտման մեկ եղանակ: Դասագրքային նյութերից բացի աշակերտները օգտվել են նաև լրացուցիչ աղբյուրներից: Երեխաները օգտագործել են նաև պաստառներ և նկարներ:

1 խումբ՝ Ջերմոցային էֆեկտ . Լա՞վ է, թե վա՞տ

Վերջին տարիներին շատ է խոսվում ջերմոցային է էֆեկտի մասին:Թե ինչ է ջերմոցը գիտի յուրաքանչյուր մարդ: Այնտեղ, ապակե կտուրի տակ ավելի խոնավ, ավելի տաք պայմաններ են ստեղծվում, քան ջերմոցը ժրջապատող միջավայրում: Այժմ մոտավորապես նույն բանն է դիտարկվում երկրագնդի վրա: Ջերմոցային երևույթը մթնոլորտի ստորին շերտերի տաքացումն է՝ նրանում արեգակնային ճառագայթների ազատ ներթափանցման հետևանքով: Ինչու՞ է այդպես: Գիտնականները շատերը կարծում են, որ մթնոլորտում կուտակված արդյունաբերական ձեռնարկությունների թափոնները՝ ածխաթթու գազ, մեթան, ֆրեոն և այլկն նպաստում են ջերմոցային էֆեկտի առաջացմանը: Վերջին 30 տարվա մընթացքում երկրագնդի միջին ջերմաստիճանը ավելացել է 1 աստիճանով: եթե տաքացումը նույն տեմպերով աճի, ապա 30-50 տարի անց երկրի վրա ջերմաստիճանը կավելաքնա 2-3 աստիճանով, ինչը կհանգեցնի աղետալի հետևանքների: Սառցադաշտերը կսկսեն հալվել, Համաշխարհային օվկիանոսի մակարդակը կբարձրանա,որոշ երկրներ կանցնեն ջրի տակ: Սակայն միևնույն ժամանակ պարզվում է, որ ջերմոցային գազերի կուտակումը կարող է ունենալ նաև դրական հետևանքներ: Օրինակ մթնոլորտում ածխաթթու գազի ավելացումը ակտիվացնում է ֆոտոսինթեզը,ջերմաստիճանի բարձրացումը կհանգեցնի օվկիանոսի մակերևույթից ջրի գոլորշիացմանը, այն վայրերում որտեղ երաշտ է կլիման ավելի խոնավ կդառնա:

Այդ իսկ պատճառով պետք չէ մարդկանց վախեցնել «աշխարհի վերջի ու համաշխարհային ջրհեղեղի» կանխատեսումներով:

2 խումբ՝ Օզոնային ճեղք, ունի՞ արդյոք այն «կարկատան»

Հիշու՞մ եք արդյոք, թե ի՞նչ հոտ է գալիս ամպրոպից հետո: Դա օզոնի հոտն է: Բանն այն է, որ էլեկտրական պարպման /կայծակի/ դեպքում մթնոլորտում թթվածնից ոչ մեծ քանակությամբ օզոն է առաջանում: Ի՞նչ է օզոնը: Դա գազ է, որը բաղկացած է թթվածնի 3 ատոմից, քիմիական բանաձևն է O_3: 19-35 կմ բարձրության վրա մեծ խտության օզոնային շերտ կա, այդ շերտը չափազանց օգտակար է մեզ համար՝ այն պահում է ուլտրամանուշակագույն ճառագայթումը: Մարդկությունն արդեն վաղուց

ապրում է օզոնային «հովանոցի» տակ և նույնիսկ չի էլ մտածում, որ այն կարող է «մաշվել»: Իսկ այն արդեն մաշվել է: Գոյություն ունեն տարբեր գիտական կարծիքներ, թե ով է դրանում մեղավոր: Օզոնային շերտի վրա վնասակար ազդեցություն թողնելու համար բավական են հրաբխային թափոնները և մի շարք բնական երևույթներ: Սակայն դրան հակառակ որոշ գիտնականներ պնդում են , որ օզոնային ճեղքերի եթե ոչ առաջացումը, ապա լայնացումը տեղի է ունենում մթնոլորտ մուտք գորող գերձայնային ինքնաթիռների և ոչ լրիվ այրված վառելանյութերի արտանետումների հետևանքով, ինչպես նաև տարբեր աէրոզոլների և սառնարաններում օգտագործվող ֆրեոն տեսակի գազերի օգտագործման հետևանքով: Թե ով է իրավացի, դժվար է ասել: Սակայն վտանգը չափազանցնելը նույքան վնաս է, որքան և թեագնահատելը: Մարդը չի կարող ապրել առանց սառնարանների, ինքնաթիռների, տիեզերանավերի: Իսկ ահա տեխնիկան կատարելագործել պետք է:Եվ եթե մեզանից մեկը մեծանա և որոշի ինքաթիռներ նախագծել, ապա թող չմոռանա այս ամենը և «կարկատաններ» դնի օզոնային ճեղքերի վրա:

3 խումբ՝ Ի՞նչ է սմոգը

Սմոգը ծխի, մառախուղի և փոշու խառնուրդն է: Այս երևույթի հետ լավ ծանոթ են մեծ և արդյունաբերական քաղաքների բնակիչները: Գոյություն ունի 2 տեսակի սմոգ՝ Լոնդոնյան և Լոս Անջելոսյան: Լոնդոնյան սմոգն առաջանում է ձմռանը՝ եղանակի անպարենպաստ պայմանների հետևանքով, եթե քամի չկա, իսկ ավելի բարձր գտնվող օդի շերտերը տաք են, քան երկրին մոտ գտնվող օդը: Արդյունքում ծուխը, փոշին, օդը աղտոտող նյութերը/ ծծմբի և ածխածնի օքսիդներ/ չեն կարող օդ բարձրանալ և տարածվել այլ ներքևում ստեղծում են մառախուղ: Լոս Անջելոսյան սմոգն առաջանում է տարվա տաք եղանակներին: Սմոգը գրգռում է աչքերը, առաջացնում շնչառական խնդիրներ, հնարավոր են նաև մահվան դեպքեր: Օրինակ Լոնդոնում 1952թ սմոգից 2 շաբաթվա ընթացքում մահացել է 4000 մարդ: Սմոգի առաջացման պատճառը օդի շատ բարձր աղտողվածությունն է: Որպես աղտոտիչներ հանդես նեն գալիս մի շարք արտանետվող գազեր՝ աշխաթթու գազ, ծծմբի օքսիդներ, ազոտի օքսիդներ, մեքենաների շարժիչներից արտանետվող կապարի միացություններ և այլն:

4 խումբ՝ Թթվային անձրևներ

Հանածո վառելիքները այրելիս օդ են արտանետվում ծծմբի, ածխածնի, ազոտի օքսիդներ: Այդ օքսիդները միանալով օդի ջրային գոլորշիների հետ, առաջացնում են ծծմբական, ազոտական թթուներ և ածխաթթու: Երբ անձրև կամ ձյուն է տեղում ,այս թթուները թթվային անձրևների տեսքով թափվում են Երկրի վրա:Մեր օրերում օդի

թթվայնությունը և թթվային անձրևները ճանաչվել են որպես Երկիր մոլորակի միջավայրի կայունության և որակի վրա ազդող առաջնահերթ գործոններ: Թթվային անձրևների ազդեցությունը կարող է ավերիչ լինել կենսական աշխարհի շատ տեսակների, ինչպես նաև մարկության համար: սակայն թթվայի անձրևների քայքայիչ ազդեցությունը չի սահմանափակվում միայն բնական միջավայրով: Քարով, մետաղով և ցեմենտով կառուցված շինությունները նույնպես կարող են վնասվել: Թթվային անձրևների հետևանքով վնասվել են մի շարք հռչակավոր հուշարձաններ, այդ թվում Հռոմի հանրահայտ Կոլիզեումը:

Խմբերի ելույթներից հետո աշակերտները գալիս են այն եզրահանգմանը, որ մարդկությունը կարող է և պետք է ապրի համերաշխ ու մաքուր երկրագնդի վրա:

Վերջում դասարանին առաջարկվում է խաղալ «Կյանքի որակ» խաղը: Սեղաններն ու աթոռները դասավորել այնպես, որ դրանց շուրջ տեղավորվի 4 խումբ: Սեղանների վրա դրված են տարբեր երկրներիկ անուններով և հկարագրություններով թղթեր; Այս խաղում դասարանը աշխարհն է, որում բազմաթիվ երկրներ կան: Երեխաները ընթերցում են երկրների նկարագրությունները և « բնակվում» այն երկրում, որտեղ իրենց կարծիքով կյանքի որակն ամենահարմարն է: Երեխաները ներկայացնում են իրենց մեկնաբանությունները, թե ինչու՞ են այս կամ այն երկիրն ընտրել: Արդյունքում սեղաններից մեկը/երկիրը/ դատարկ կմնա: Հետո աշակերտների ուսուցիչն առաջարկում է «նոր երկրում» ստեղծել այն պայմանները, որոնք իրենք համարում են հարմար մարդու կենսագործունեության համար: Այդ պայմանները ստեղծելուց հետո երեխաները « բնակեցնում» են այդ երկիրը: Քանի որ աթոռները քիչ են դրված, ոչ բոլորն են հասցնում « բնակվել » այդ նոր երկրում և մնում են իրենց տեղերում:

Ուսուցիչը աշակերտերին ուղղում է հետևյալ հարցերը՝ ինչպե՞ս եք ձեզ զգում երեխաներ, ո՞վ է խանգարում ձեզ ձեր երկիրը դարձնել այնպիսին ինչպիսին որ դուք եք ցանկանում: Խաղը ավարտվելուն պես աշակերտները փորձում են ձևակերպել «կյանքի որակ» հասկացությունը:

Աշակերտների շրջանում կատարված հարցումները ցույց են տալիս, որ նման ինֆորմացիոն դասերը շատ կարևոր և արդյունավետ են: Նրանց խոսքով դասը նրանց մի շարք տեղեկություններ է տալիս, իրազեկում, ավելի պատրաստված է դարձնում: Քիմիայի դասաժամերը միանշանակ կարելի է շատ ավելի հետաքրքրի և արդյունավետ դարձնել՝ համապատասխան մեթոդներ կիրառելով:

Եզրակացություն

Այսպիսով՝ էկոլոգիական դաստիարակությունը անմիջապես կախված է էկոլոգիական գիտակցության, էկոլոգիական կուլտուրայի և գիտելիքների մակարդակից: Էկոլոգիական դաստիարակությունը չափանիշ է համարվում մարդու գործնական և հոգատար վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ և այդ վերաբերմունքի համապատասխանեցումը հասարակական նորմերին: Նպատակաուղղված մանկավարժական գործընթացի պայմաններում էկոլոգիապես դաստիարակված մարդու ձևավորումը ենթադրում է բնական և սոցիալական միջավայրի գործոնների մասին գիտական գիտելիքների օրգանական միասնություն :

Մենք, այժմ ապրում են էկոլոգիական այնպիսի ժամանակաշրջանում, ուր ամեն պահի կարելի է սպասել էկոլոգիական աղետի: Դա գլոբալ խնդիր է և վերաբերում է բոլոր ազգերին: Հայաստանում առկա էկոլոգիական խնդիրները հասնում են մեծ չափերի:Որպես օրինակ բերենք այն փաստը, որ ընդհանուր տվյալներով յուրաքանչյուր մարդու հասնում է շատ քիչ կանաչ տարածք: Այդ տարածքները ոմանք օգտագործում են սեփական նպատակների համար, հաշվի չառնելով դրա հետագա վտանգավորությունը: Ոչնչացնում են զբոսայգիները, այն դարձնելով սրճարաններ կամ զվարճանքի վայրեր: Կանաչ տարածքների բացակայության հետևանքով է, որ հիվանդությունների քանակը չափից դուրս շատացել է, ինչպես նաև ոչնչանում են այդ տարածքներում ապրող կենդանիների տեսակները: էկոլոգիական դաստիարակության գործընթացի հիմքում ընկած են սովորողների հոգեկան որակները, բնության նկատմամբ հետաքրքրությունը, արժեքային դիրքորոշումներն ու հարաբերությունները: Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգի ընդունումը կնպաստի ազգային ընդհանուր կրթական համակարգում բնապահպանական կրթության և դաստիարակության դերի բարձրացմանը, որակական ցուցանիշների բարելավմանը և միջազգային չափանիշներին աստիճանաբար համապատասխանեցմանը, ՀՀ ազգաբնակչության և մատաղ սերնդի էկոլոգիական գիտակցության, մտածելակերպի և հայրենի բնության նկատմամբ պատասխանատու ու հոգատար վերաբերմունքի ձևավորմանը, միջազգային մակարդակում հայ էկոլոգ մասնագետների մրցունակության ու հեղինակության բարձրացմանը, հասարակական կարծիքի ինստիտուտի ձևավորմանը և հասարակության իրազեկվածության բարձրացմանը: Այս ամենը հիմք կսեղծի Հայաստանի Հանրապետության տնտեսական աճի պայմաններում շրջակա միջավայրի

բարենպաստ էկոլոգիական վիճակի և երկրի սոցիալական կայունության ապահովման համար: ՀՀ ազգաբնակչության և մատաղ սերնդի էկոլոգիական գիտակցության, մտածելակերպի և հայրենի բնության նկատմամբ պատասխանատու ու հոգատար վերաբերմունքի ձևավորումը, միջազգային մակարդակում հայ էկոլոգ մասնագետների մրցունակության ու հեղինակության բարձրացումը, հասարակական կարծիքի ինստիտուտի ձևավորումն ու հասարակության իրազեկվածության բարձրացումը հիմք կսեղծեն Հայաստանի Հանրապետության տնտեսական աճի պայմաններում շրջակա միջավայրի բարենպաստ էկոլոգիական վիճակի և երկրի սոցիալական կայունության ապահովման համար: Այսպիսով, կարող ենք ասել, որ աշխարհի առջև ծառացած խնդիրը հնարավոր է լուծել միայն մարդկության ողջ գործունեության բովանդակության վերաիմաստավորման միջոցով, այսինքն՝ ձևավորել «նոր» մարդ, որն ի վիճակի կլինի հասկանալ բնությունը և պահպանել նրա հարստությունը նոր սերունդների համար: Հասարակության զարգացման ժամանակակից պայմաններում բացառիկ կարևորություն է ձեռք բերում <<մարդ-բնություն-հասարակություն>> բազմամակարդակ համակարգում կայուն հավասարակշռվածության պահպանման հիմնախնդիրը, որի լուծման իրական միջոց է էկոլոգիական կրթության և դաստիարակության հայեցակարգը: Հարցն այսպես է դրված. եթե ուզում եք, որ մեր մոլորակը և ժողովուրդները գոյատևեն, ապա յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր դեռահաս, պատանի, երիտասարդ շրջակա միջավայրի պահպանությունը պիտի դարձնի իր սուրբ պարտականությունը: Եվ այս գործում առաջին ուղղորդողը պիտի լինի դպրոցն ու ուսուցիչը: Մեր մանկավարժներն ունեն բանավանաչափ ներուժ, և բնագիտության դասաժամերն ավելի արդյունավետ և նպատակաուղղված օգտագործելու դեպքում հնարավոր է ձևավորել էկոլոգիապես կրթված և տեղեկացված աշակերտներ:

Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու.Ա., Մանկավարժություն, Երևան, 2005թ.:
2.Ասատրյան Լ.Թ, Ավանեսյան Լ.Գ., Սահակյան Ա.Ս., էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում, Երևան, 2003թ.:
3. Ասատրյան Լ.Թ., էկոլոգիական դաստիարակության հիմունքները, Երևան,
4. Գրիգորյան Կ.Վ. և ուրիշ., էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, Երևան, 2010թ., 224էջ:
5. Հովսեփյան, Մարուխյան , «Անձի էկոլոգիական կուլտուրա», Երևան, 2005թ.:
9. Одум Е., Экология, 1968г. 167 с.